ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ
ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՇԱՔԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բովանդակություն

1. Ներածություն_____2-3
2. Հետազոտության նպատակը_____4
3. Հետազոտության խնդիրներն են_____5
4. Հետազոտության մեթոդաբանությունը_____5
5. Գրական ակնարկ_____6-9
6. Գործնական համատեքստ_____10
7. Հետազոտության ընթացքը_____11-12
8. Եզրակացություն_____13
9. Գրականության ցանկ_____14
10. Հետազոտության ընթացք և վերլուծություն_____15-16
11. Օրվա դասի պլան 1._____15-16
12. Օրվա դասի պլան 2._____17
13. Օրվա դասի պլան 3._____18
14. Փորձարարական դաս 1._____19
15. Փորձարարական դաս 2._____20
16. Փորձարարական դաս 3._____21

Ազգային արժեհամակարգի ձևավորումը Հայոց պատմությանդասերին

Ներածություն

Հայոց պատմություն առարկան միշտ իր կարևոր ներդրումն է ունեցել հայ աշակերտների ազգային մտածելակերպի, ազգային արժեքների ձևավորման գործընթացում: Դարեր շարունակ մեր պատմիչների աշխատությունները ծառայել են որպես դասագիրք և ազգային, հայրենասիրական ոգով դաստիարակել բազում սերունդներ:

Մեր իրականության մեջ այսօր՝ հատկապես չարաբաստիկ պատերազմից հետո փոքր ինչ դժվարացել էր հայ աշակերտին մատուցել հայոց պատմությունը իր ողջ շերտերով, նրանից դուրս բերել արժեքներ և այդհենքի վրա դաստիարակել սերունդներ: Որպես պատմության ուսուցիչ առաջացավ մի պատնեշ. տալ աշակերտին հայրենասիրության այսօրվա նկարագիրը, որը կծառայի վաղն ունենալ ավելի ուժեղ, մրցունակ, դիմակայուն հայրենիք:

Մի բան հստակ է, որ ինչքան էլ, որ փոփոխվեն մարդկանց մտածելակերպը, արժեհամակարգը, վերաբերմունքը ժամանակակից երևույթների ու գործընթացների հանդեպ, միևնույն է այսօրվա աշակերտին էլ պետք է դաստիարակել ազգային արժեքներով ու հերոսական անցյալի օրինակներով, օրինակներ, որոնք պետք է համապատասխանեցվեն այսօրվա զարգացող աշխարհի պահանջներին, հերոսական մարտեր, որ պետք է մղվեն ոչ միայն արյունալի ճակատամարտերում, այլ նաև՝ այնպիսի ոլորտներում, որոնք կհանգեցնեն այդ ճակատամարտերի դրական հանգուցալուծմանը:

Հայոց պատմությունն այն առարկան է, որ պետք է զարգացնի աշակերտի քննադատական, վերլուծական, համեմատական մտածողությունը և դնի դիվանագիտության ամուր հենարան:

Իսկ ի՞նչ ասել է «Արժահամակարգ»:

« Արժեհամակարգ » հասկացությունը մանկավարժության մեջ ընկալվում է

շատ լայն շառավիղով: Առավել տարածված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների վերը թվարկված համախմբերից որևէ մեկինգերապատվություն տալը կնշանակեր

ոչ մանկավարժական մոտեցում խնդրին:Արժեհամակարգը ամբողջական է, լիակատար բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում:

Ահա թե ինչու «Արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ էխիստ որոշակի ստույգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի Հայոց պատմության դերը Հայոց պատմության մեջ կուտակված է անցյալի պատմությունը , անցյալի փորձը, որը, եթե նախկինում միայն աշակերտի մեջ ձևավորում էր հայրենադիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած նվաճումների համար հպարտության զգացում, այսօր պիտի ձևավորի նաև անցյալից դասեր քաղելու,ճիշտ վերլուծելու, ճիշտ կողմնորոշվելու, այսօրվա պսհանջներին համապատասխան, բայց նույն ոգով պայքարելու և դրական վերջնարդյունքի հասնելու կարողունակություն:

Հետազոտության նպատակը

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել և հիմնավորել հայ աշակերտի ազգային արժեհամահարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում պատմության առարկայի դերն ու կարևորությունը նաև պատմությունից դասեր քաղելու անհրաժեշտությունը: Դասաժամերի ընթացքում բացահայտել սովորողների վերաբերմունքը ազգային հերոսների, պատմական կարևոր իրադարձությունների վերաբերյալ, իրենց ունեցած գիտելիքները, վերհանել սխալները, թերությունները, սովորեցնել մոտենալ հարցին քննադատորեն:

Կիրառել մեթոդական հնարներ, ուսուցման ժամանակակից մեթոդներ սովորողների մոտիվացիան բարձրացնելու համար, որն այնքան պակասել էր չարաբաստիկ հայ- ադրբեջանական պատերազմից հետո:

Դպրոցական խմբակների շրջանակներում, ինչպես նաև դասաժամերին հաճախ անդրադառնալ հայ ազգային մերօրյա հերոսների կերպարներին, սխրանքներին,միասին գնալ Եռաբլուր, հարգանքի տուրք մատուցել տղաներին,միասին խորհել, մտածել ու գտնել սովորելու կորցված ցանկությունը հանուն ազգի փրկության:Այդպիսով բարձրացնելով նաև աշակերտի դերն ու նշանակությունը: Ստիպել, որ ինք իրեն կարևոր զգա:

Հետազոտության խնդիրներն են

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Հետազոտության մեթոդաբանությունը

Ելնելով հետազոտության մեջ առաջադրված խնդիրներից՝ կարելի է կիրառել են հետևյալ մեթոդները. Կերպարային քարտ՝ սա հրաշալի միջոց է պատմական կարևոր իրադարձությունները «ներսից»՝ տարբեր կերպարների դիտանկյունից ուսումնասիրելու համար: Քարտը ներկայացնում է տվյալ իրադարձության կերպարների մտադրությունները, հուզական վիճակները, տեսանկյունները: Կերպարային քարտը կարող է կիրառվել պատմական ակտիվ մտածողություն խթանող տարատեսակ հարցադրումների քննարկման համար:[1]

Կոնկրետ մերօրյա պատմական կերպարներին՝ հերոս տղաներին, անդրադառնալը նպատակ ունի վերաիմաստավորելու պայքարի նվիրյալների օրինակելի կենսագործունեության հիմնական դրվագները, հատկանշելու հերոսի բարոյակամային բարձր ոգին, ինչը հնարավորություն կտա ուրվագծելու այն ուսումնական նյութը, որը դրական ազդեցություն կունենա սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության համար:[2]

Գրական ակնարկ

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն։ Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին։ Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը նգլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը(3) ։

Նախատեսվում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

•լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք։

•Ունենա ազգային ինքնագիտակցություն

•Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

•Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում,

•Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,

•Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը։

•Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն…

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական կամ արժեաքյին և ընդհանուր զարգացման խնդիրներ։ Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում էոչ թե մեկուսացված կամ

առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու
կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում(4) ։

Հայոց պատմություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին ազգայինարժեքներով։ Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ(5) ։

1. Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակնորի հայոց պատմության ամբողջական գիտելիքներով,որոնց միջով կարմիր թելով պետա է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը։ Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից։Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին,տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին։
2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները , հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները։
3.Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների , առանձնահատկությունների մասին։ Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ։ Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին։
4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը։ Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ։
5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները , ինչպես են ընտանիք կազմել,սնվել ու հագնվել։ Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային

արմատներին ու ակունքներին։

6. Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը։ Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները։

7.Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից։

8.Դաստիրակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում։ Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է։

9. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը,որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը։

10. Հասնել այն բանին,որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման , հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին։

11. Նպաստել մարդասիրությն և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը։

12. Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն։

13. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայինկատմամբ։

14. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստողծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները.

խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը,մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները։

Սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվոլու,անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ։

- Ձևավորել պատմական դեպքերը,երևույթները համեմատելու, վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ.

- Զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ

•Զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր և հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն, տեսողություն, կամք, համառություն) և մտավոր գործողությունները (համեմատում, համադրում և այլն)։

Գործնական համատեքստ

Այս հետազոտական աշխատռանքը անցկացվել է այն դպրոցում,որտեղ աշխատումեմ ավելի քան 13 տարի:

Սյունիքի մարզ Շաքիի միջնակարգ դպրոց:

Փորձարարական դասերը անցկացվել է 5-րդ դասարանում:

Արժեքային համակարգին ձևավորումը՝ հայրենասիրությունը անհրաժեշտ եմ համարում այս տարիքային խմբում և նպատակահարմար եմ գտել այդ դասարանում իրականացնել փորձարարական դասեր:

Հետազոտության ընթացքը

5-րդ դասարանում հավաքված են տարբեր կարողություններ ունեցող աշակերտներ:
Մինչ հետազոտության սկսելը ես փորձեցի հասկանալ, թե սովորողները իրենց ինչպես կդրսևորեն:
Ես տեսնում էի, որ չնայած առարկայական առաջընթաց էր գրանցում,բայց ցանկալի ներգրավվածություն չկար:
Նպատակ էի դրել աշակերտների մեջ սերմանել հայրենասիրություն, ամրապնդել սովորողների սերն ու հարգանքը Հայաստան հայրենիքի հանդեպ, աշակերտների ներգրավվածությանը հասնել հարցադրումների մեթոդի միջոցով:
Մտածում էի արդյոք ընտրածս ռազմավարությունը ճիշտ նպատակին էր ծառայելու:
Հարցերիս պատասխանները գտնելու և եզրահանգումներ անելու նպատակով որոշեցի հետազոտական դասեր անցկացնել:
Անցկացրել եմ 3 հետազոտական դաս 5-րդ դասսրանում:Այդ դասերից յուրաքանչյուրը ընթանում էր հարցադրումների պարզից դեպի բարդ շղթայով :
Հետազոտական առաջին դասը սկսեցի հայտորոշիչ թեստով, որին մասնակցում էր 7 աշակերտ:Նրանցից որոշներն անվստահ էին պասիվ:Փորձեցի մեծացնել ներգրավվածությունը, հարցնում էի ձեռք չբարձրացրած աշակերտներին:
Հարց ու պատասխան հատվածում ներգրավվեցին 10 աշակերտները, որոնք ներկայացրեցին հայրենիքին նվիրված բանաստեղծություններ,երգեր :Տասն էլ նկարեցին հայրենիքն ինչպես որ պատկերացնունում էին :
Երկրորդ դասն անցավ ավելի ակտիվ:Նախորդ դասից ստացած գիտելիքի պաշարը թույլ տվեց ակտիվանալ:Կարճ դասխոսության մեթոդով նորից փորձեցի ներգրավվել աշակերտներին:Ակտիվություն ցուցաերոցին գրեթե բոլորը, քարտեզի վրա ցույց տվեցին Հայկական լեռնաշխարհի լճերը, գետերը, լեռները:
Դասի վերջում անցկացրեցի անդրադարձ:
Երրորդ դասն անցավ ստացված:Կիրառեցի փոքր խմբերով մեթոդը,խմբերից յուրաքանչյուրը ներկայացրեց իր աշխատանքը:Արդեն ներգրավվել էին բոլոր աշակերտները :
Վերջնական արդյունքում եկա այն եզրահանգման,որ աշակերտները նկարագրեցին

ինչ է հայրենիքը, իրենց բնակության վայրը, պետությունը, հայոց հայրենիքը, կիրառեցին քարտեզները:Զանազան մեթոդների շնորհիվ հաճույքով մասնակցեցին դասերին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին Հայոց պատմության դասերին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ պատմությունառարկան: Դպրոցում սովորողները Հայոց պատմության ծրագրի շրջանակներում ծանոթանումեն հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Հայոց պատմություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով արժեաքյին համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն,

արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է

ազգային հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Գրականության ցանկ

1.«Գիրք պատմության ուսուցման ինչու,± ինչպե±ս » Պարադիգա կրթական հիմնադրամ, Երևան2020թ էջ 39

2. « Հայրենագիտությունն դպրոցում» գիտամեթոդական վերլուծական հանդես, Երևան2017թ էջ 39

3.Ղուկասյան Ա. Հայոց պատմություն 8-9-րդ դասարաններ ՈՒՀ

4.Բաբանսկի Յու. « Աշակերտների դաստիարակությունը կոնպլեքսային մոտեցում» էջ112

5. Ղուկասյան Ա. Հայոց պատմություն 8-9-րդ դասարաններ ՈՒՀ էջ 12

6. Համացանց

Հետազոտության ընթացք և վերլուծություն

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Սեպտեմբերի 26 2023թ

Առարկա. Իմ հայրենիք

Դասարան. 5-րդ դասարան

Թեմա. ՝Ես ճանապարհորդում եմ Հայկական լեռնաշխարհի տարածքով՝ Լեռներ, լճեր, նահանգներ՝:

Դասի նպատակը. Ձևավորել հայրենիք հասկացությունը մեկնաբանելու տարբեր քարտզներ ճանաչելու և կիրառելու հմտության, հոգատար վերաբերմունք սեփական ազգի ու հայրենիքի պատմամշակութային ձեռքբերումների նկատմամբ:

Վերջնարդյունք. • Կարողանա նկարագրի իր բնակության վայրը, պետությունը, հայոց հայրենիքը, նրա աշխարհագրական դիրքը, սահմանների պատմաաշխարհագրական միջավայրը:

•Կարողանա մեկնաբանի ,կիրառի զանազան քարտեզներ:

•Գնահատի իր համայնքի, ազգի պատմամշակութային ձեռքբերումները:

Դասի տիպ. Նոր նյութի մատուցում

Կապը ՀՊՉ-ի հետ. Հ15,Հ16,Հ17,Հ25,Հ28,Հ30,Հ31,Հ44,Հ45

Միջառարկայական կապ. Բնագիտություն, մայրենի

Ընթացքը . ԽԻԿ

Խթանման փուլ. Կատարել <<մտագրոհ>> վարժությունը,որի նպատակն է վերհանել ունեցած գիտելիքները,թարմացնել երեխաների հիշողությունը:Կատարել <<կարճ դասախոսություն>> և <<զննականություն>> մեթոդները,որի նպատակն է որոշակի գիտելիքների մատուցում:/5ր/

Իմաստի ընկալման փուլ. Նոր նյութի մատուցում: Համակցված և մատչելի լեզվով սովորողներին ներկայացնել դասանյութի հիմնական գաղափարը, աշխարհագրական օբյեկտները ցուցադրել քարտեզի վրա:Կարելի է կատարել

<<մտքերի քարտեզագրում>> մեթոդը:/25-30ր/

Կշռադատման փուլ. Նոր նյութի ամրապնդում:Հարց ու պատասխանի միջոցով ամրապնդել ձեռք բերված գիտելիքները, կարելի է կատարել անդրադարձ:/5ր/

Տնային հանձնարարություն «Զինանշաններ և դրոշներ՝ ժամանակակից նպատմական»

Օրվա դասի պլան

Սեպտեմբերի 7 2023թ.

Առարկա. Իմ հայրենիք

Տևողություն.45 րոպե

Դասարան. 5-րդ դասարան

Թեմա. « Ես իմ փոքր հայրենիքում »

Նպատակ. Զևավորել հայրենիք հասկացությունը մեկնաբանելու տարբեր քարտզներ ճանաչելու և կիրառելու հմտության, հոգատար վերաբերմունք սեփական ազգի ու հայրենիքի պատմամշակութային ձեռքբերումների նկատմամբ:

Վերջնարդյունք. • Կարողանա նկարագրի իր բնակության վայրը, պետությունը, հայոց հայրենիքը, նրա աշխարհագրական դիրքը, սահմանների պատմաաշխարհագրական միջավայրը:

•Կարողանա մեկնաբանի ,կիրառի զանազան քարտեզներ:

•Գնահատի իր համայնքի, ազգի պատմամշակութային ձեռքբերումները:

Դասի տիպ . Համակցված

Կապը ՀՊՉ-ի հետ. Հ15,Հ16,Հ17,Հ25,Հ28,Հ30,Հ31,Հ44,Հ45

Միջառարկայական կապ. Բնագիտություն, մայրենի

Ընթացք. ԽԻԿ համակարգ

Խթանման փուլ. կատարել հայտորոշիչ թեստ՝ վեր հանել ունեցած գիտելիքները,թարմացնել երեխաների հիշողությունը:/5ր/

Իմաստի ընկալման փուլ. Ներկայացնել դասանյութի հիմնական գաղափարը, կատարել վեննի դիագրամ՝ գյուղ և քաղաք՝ որպես փոքրիկ հայրենիք:/25_30 ր/

Կշռադատման փուլ. Կատարել անդրադարձ, հարց ու պատասխանի միջոցով ամրապանդել ձեռք բերված գիտելիքները:/5/

Տնային հանձնարարություն.« Մեր հարևանները»

Օրվա դասի պլան

Հոկտեմբերի 10 2023թ.

Առարկա. Իմ հայրենիք

Տևողություն.45 րոպե

Դասարան. 5-րդ դասարան

Թեմա. « Մշակույթ և կենցաղ »

Նպատակ. Ձևավորել հայ ժողովրդի ծագունմաբանությունը, մշակույթը, կենցաղը նկարագրելու ու վերլուծելու կարողություն:

Վերջնարդյունք. • Կարողանա մեկնաբանի Հայկական լեռնաշխարհի բնակիչների ավանդական զբաղմունքը, առօրյա կյանքը ու կենցաղը, նյութական և հոգևոր մշակույթի բաղադրիչները:

•Գնահատի ազգային հոգևոր-մշակութային արժեքները՝ որպես համամարդկային արժեքներ:

Առաջարկվող գործունեության ձևերը. Շաբաթօրյակի կազմակերպում պատմամշակութային և հոգևոր հուշարձաններ:

Խաչվող հասկացություն.վերլուծի ավանդապատումները, դրանց ունեցած ազդեցությունը տեղանունների, մեր ազգի ինքնության ձևավորման վրա:

Դասի տիպ . Համակցված

Կապը ՀՊՉ-ի հետ. Հ15,Հ16,Հ25,Հ28,Հ30,Հ31,Հ44,Հ45

Միջառարկայական կապ. մայրենի

Ընթացք. ԽԻԿ համակարգ

Խթանման փուլ. կատարել քննարկում,զրույց, սովորողները արտահայտեցին իրենց մտքերը:/5ր/

Իմաստի ընկալման փուլ. Կիրառել աշխատանք փոքր խմբերով մեթոդը, խմբերից յուրաքանչյուրը ներկայացրեց իր աշխատանքը:/25_30 ր/

Կշռադատման փուլ. Անցկացնել հայտորոշիչ թեստ:/5ր/

Տնային հանձնարարություն.« Ազգային տարազ»

Փորձարարական դաս 1.

Վերլուծություն 26.09.2023թ

Անցկացրել եմ փորձարարական դաս 5-րդ դասարանում Իմ Հայրենիք առարկայից:

Դասի թեմա. « Ես ճանապարհորդում եմ Հայկական լեռնաշխարհի տարածքով՝ լեռներ, լճեր, նահանգներ»:

Դասի տևողությունը՝45 ր:

Դասի նպատակն էր ձևավորել հայրենիք հասկացությունը, սեփական ազգի ու հայրենիքի պատմամշակութային ձեռքբերումների նկատմամբ հոգատար վերաբերմունք՝ սովորողների մոտ խթանել հայրենասիրություն:

Դասն անցկացվեց ԽԻԿ համակարգով:

Խթանման փուլն անցավ հաջող, մտագրոհ միթոդի միջոցով սովորողները անկաշկանդ արտահայտեցին իրենց մտքեր:

Իմաստի ընկալման փուլում իրականացված մեթոդի շնորհիվ (մտքերի քարտեզագրում) հաջողվեց հասնել վերջնարդյունքին՝ նկարագրեցին իրենց բնակության վայրը, պետությունը նրա աշխարհագրական դիրքը:

Կշռադատման փուլում սովորողներն ավելի ակտիվ էին:

Հարցեր քննարկումներից հետո կատարեցին եզրահանգումներ, յուրաքանչյուր հայի գործունեությունը պետք է ուղղված լինի հայրենիքի հզորացմանը:

Կատարվեց ուսուցանող գնահատում:Դասը լսեց հայոց լեզբի և գրականության ուսուցչուհի Նելլի Ենոքյանը:

Դասի թերությունն այն էր ,որ սկզբում աշակերտները ցուցաբերեցին պասիվություն:

Հաջորդ դասը կպլանավորեմ՝ աշակերտներին ակտիվ ներգրավվելով դասապրոցեսին:

Փորձարարական դաս 2.

Վերլուծություն 07.09.2023թ.

Առարկա ՝ Իմ հայրենիք

Դասարան 5-րդ

Դասի թեմա՝ Ես իմ փոքրիկ հայրենիքում

Դասի տիպը՝համակցված

Դասի տևողությունը՝ 45 ր.

Դասալսող՝ հումանիտար առարկաների մ/մ նախագահ Նելլի Ենոքյան

Դասի նպատակը. Ձևավորել հայրենիք հասկացությունը:

Դասի սկզբում կատարեցի հատորոշիչ թեստ աշակերտները մեծ ոգևորություն ցուցաբերեցին :

Իմաստի ընկալման փուլում ներկայացրեցի դասնյութի հիմնական գաղափարը:

Կշռադատման փուլում հարց ու պատասխանի միջոցով ամրապնդվեց ձեռք բերված գիտելիքները: Կատարվեց գնահատում:

Դասի թերի կողմը առաջացած տեխնիկական խնդիրներն էին,ինչը բերեց ժամանակի կորստի:

Փորձարարական դաս 3.
Վերլուծություն

10.10.2023թ.
Առարկա՝ Իմ հայրենիք

Դասի թեմա.«Մշակույթ և կենցաղը»

Դասարան՝ 5-րդ

Անցկացրել եմ փորձարարական դասդ 5-րդ դասարանում՝ԻՄ հայրենիք առարկայից : Կազմակերպչական մասից հետո անցա դասի խթանման փուլին, հենց սկզբում սովորողները ցուցաբերեցին ակտիվություն, արտահայտեցին իրենց մտքերը:

Իմաստի ընկալման փուլում ունեցանք աշխատանք փոքր խմբերով: Այնուհետև դասն ամրապնդվեց հայտորոշիչ թեստի լրացումով:

Կատարվեց ուսուցանող գնահատում:

Դասի վերջում սովորողները հստակ պատկերացում կազմեցին հայկական լեռնաշխարհի բնակիչների զբաղմունքի, առօրյա կյանքի, կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթի մասին:

Դասի առավելությունն այն էր, որ դասն ամբողջությամբ յուրացրեցին, դասն ամրապնդեցինք համագործակցումով, սովորողները լրցրեցին միմյանց: